



Կարգապահական գործ թիվ ԿԳ-15111

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 267-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/156-Ա

**ՓԱՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյան, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Տիգրան Խուրշուդյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Մարիամ Աբրահամյանին (արտոնագիր թիվ 490) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 18.07.2015թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Մարիամ Աբրահամյանն ունի 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հունվար ամսից 2015թ. հունիս (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

20.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 235-Ա/ԿԳ-15111 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

21.07.2015թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը՝ 19:54-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Մարիամ Աբրահամյանը 2015թ. հոկտեմբերի 13-ին Պալատ է ներկայացրել դիմում, որով հայտնել է որ չի կարող ներկայանալ 2015թ. հոկտեմբերի

16-ին կայանալիք նիստին: Խնդրում է հարցը քննել իր բացակայությամբ: Միաժամանակ նույն դիմումով հայտնել է, որ 2014թ. դեկտեմբերից մինչև 2015թ. հունիսի 26-ը բացակայել է Հանրապետությունից, որի արդյունքում առաջացել է անդամավճարի պարտք: Որպես ապացույց ներկայացվել է անձնագրի պատճենը:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Մարիամ Աբրահամյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 20.10.2006թ. (հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 15.10.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Մարիամ Աբրահամյանն ունի 30.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հունվար ամսից 2015թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Մարիամ Աբրահամյանն 2015թ. հունվար ամսից մինչև 2015թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.10.2015թ. տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր քննության գրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 15.10.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Մարիամ Աբրահամյանի (արտոնագիր 490, ստացված՝ 20.10.2006թ.) նկատմամբ 2006-2014թթ. ընկած ժամանակահատվածում 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, (4 վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով և 1 վարույթ 2006թ. ընդունած Փաստաբանի վարքագծի կանոնադրքի 5-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 12-րդ հոդվածի և 13-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման հատկանիշների հիմքով) որոնք՝

- Պալատի Խորհրդի 13.11.2009թ. թիվ 28/6-Ա որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն):
- Պալատի Խորհրդի 09.02.2010թ. թիվ 3/2-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն): Տույժը մարվել է:
- Պալատի Խորհրդի 27.09.2011թ. թիվ 21/7-Ա որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն):
- Պալատի Խորհրդի 02.04.2012թ. թիվ 1/12003ԿԳ որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն):
- Պալատի Խորհրդի 30.01.2015թ. թիվ ԿԳ/14-Ա որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն):

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Մարիամ Աբրահամյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2015թ. տրամադրված տեղեկանքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մարիամ Աբրահամյանին (արտոնագիր թիվ 490) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Մարիամ Աբրահամյանի (արտոնագիր թիվ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մարիամ Աբրահամյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Մարտուն Փանոսյան